

У У. Г. П. У. Л. О. К. Р. Ф.

ԼՈՒՏԵՐՆԻ ՀԱՄԱՉԽԱՐՀԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏՈՀԱՆԴԵՅԸ.

Մայիսի առաջին օրը բացուեցաւ կոնտոնի համաշխարհական արուեստահանդէսը շըքեղացուք փառաւորութեամբ, անհամար բազմութեամբ ազգաց եւ ազանց անդ ժողովելոց՝ իրենց ճարտարութեան բերքերովը, առաջիկայութեամբ թագուհոյն Անդղիոյ եւ այլոց իշխանաւորաց: — Եւրոպայի այժմու երկնքին թանձրաթուխ եւ սպանալից ամպերուն երեսը կարծես թէ այս տիեզերական հանդէսը կարգէ գուրս գեղեցիկութեամբ ծիրանի գօախի մի է՝ որ յետոյ պատահելու փոթորիկներուն (զորս հեռի ընէ Սատուած) սաստկութիւնն ու սարսափը աւելի զգալի կընէ, յիշեցընելով մարդկանց խաղաղութեան այս ցանկալի պտուղները, եւ արիւնը առուշա պատերազմաց բրած եւ ընելու աւերմունքները:

ԱՆԳՂԻՈՑ ՀԱՐՈՒՍԵՐԵ.

Անգղիոյ պէս հարուստ երկիր չկայ. ազդ մը
չկայ՝ որոյ հարուստները Անգղիացւոց հարստու-
թեանը կարենան համեմատիլ: Հետեւեալ հաշիւը
մեր բաածը կիհաստատէ յայտնապէս:

Անգղիոյ մէջ սովորական հարուստները՝ տարին
մէկ միլիոն սթէռլինի տէր են (25 միլիոն ֆրանք):

Խիստ շատեր կան որ տարին 2 միլիոն, 3, 5 եւ 7 միլիոն եկամուտ (կէլիր) ունին հանգստութեամբ:

Ֆո'լըսթըն քաղաքը բոլոր՝ մէկ մարդու մը կարածին է:

Մեծ համբուն վրայ 7 փարսախս տեղ վերէն վար
տները բռուռն այ Քիչմոնտ դրսին կերպարերին:

Պըէտէլպէնի մարքիզը կրնայ օր մը ամբողջ իւր կալուածոցը մէջ ճանապարհորդել, 55 փարսախն տեղ:

Սընտերլէնսի կոմսութիւնը ամբողջ Սընտերլըն
տի դքսինն է:

ՏԵՇԻ ԱՐԴՅՈՒՆ ԽՈՎՃԱՐ ԼՈՆԹՐԱՅԻ ՄԵԶ ՄԱՍԸ ՀԱՊԱԾ
ՄՈՒՆ Ունի:

Աւէսթմինսթը մարգիղը՝ Աւէսթ-Էնտի հարուստ երկրին տէրն է:

Տիվլնշայրի դուքսը 96,000 արտավազ տեղ ունի՝ միայն Տէրպիի կոմսութեան մէջ, թող ուրիշ ունեցած կալուածները:

Թիջմնտի դուքսը Կուտվուտի քով 40,000 արտավար տեղ ունի, իսկ Կոթաճնի քերդին քով 300,000 արտավար տեղ:

ՑԱԽԱԼԻ ՏԱՊԱՆԱԳԻՐ ԲԱՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ.

Ուլահ Պուղտանի մէջ մի միայն բանասիրական օրագիր կենէք՝ «Կարպաթեան Հանդէս» (Մէկիսրա Քառփանցիլոո) անունով, ասոր խմբագրիչը Պ. Սիսոն՝ յայտարարութիւն մը հրատարակեր է թէ բաժանորդներուս սակաւութեանը պատճառաւ որոշեցի որ օրագրոյս բոլոր մնացած թիւերը հրապարակին մէջ այրեմ, եւ մոխիրներուն վրայ տապանաքար մը կանգնեմ այս վերնագրով.

«ԱՅՆ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԴՍԵԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՆԱԾԻՐՈՒԹԵԱՆ
ՎԱՀԱՅ»:

— Կվափաքիմքը որ այսպիսի ցաւալի փորձանքէ ազատ մնան ամենայն ազգաշահ մատենագրութիւնք եւ օրագիրք :

ԱՐԵԱՆԱՅ ՄԵՇ ԲԱՐԵՐԱՐ ՄՅ.

Փէպօտի անունով ամերիկացի մարդասէր վաճառականը որ երկար ժամանակէ իվեր Լոնտըն կը-բնակի՝ մայրաքաղաքին աղքատաց համար ընծայեր է 4,000,000 ֆրանք, զոր իւր կենդանութեանը ժամանակ կուցէ որ վայելեն աղքատք:

Այս մարդասէր զարմանալի վաճառականին այս-
սկիսի քրիստոնէական առատածեռութեան գոր-
ծերը շատ են, ու արժանի կընեն զինքը դասելու
իկարգս մեծ մարդասիրաց աշխարհի, օրինակ
ամենայն ազգաց, մանաւանդ մեր ազգին, որուն
աղքատը շատ՝ հարուստը քի՞չ :

ՊԵՐԱ Ձ ՊԱՊԵ.

Արդի Հռոմայ պապը 283^{ու} է. սոցա լէջ՝
բաց իբազմաթիւ հակասապերէ՝ այսինքն
իրարու թշնամի պապերէն, կհամրուի նաեւ
պապուհի մը, այսինքն կին պապ մը որ կը-
սուի Յովինանա (la papessa Giovanna):